

Արձանագրություն N°9/2019-2020

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2020թ. փետրվարի 21-ին տեղի ունեցած թիվ 9 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 64-ը (վաթսունչորսը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը:

Ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների նախագծի քննարկում:

ԵՊՀ արհեստակցական կազմակերպության նախագահ Արմեն Ավետիսյանը մտահոգություն հայտնեց, որ այս գիտական խորհրդի նիստը գիտական խորհրդի կանոնակարգի խախտմամբ է տեղի ունենում, քանի որ գիտական խորհրդի կանոնակարգը հստակ սահմանում է, որ գիտական խորհրդի օրակարգը պետք է տրամադրվի 5 օր առաջ, իսկ նյութերը՝ 3 օր առաջ: Ռեկտորի ժ/պ Գեղամ Գևորգյանն ասաց, որ գիտխորհրդի նիստի մասին հայտարարվել էր խորհրդի անդամներին նախօրոք՝ 8 օր առաջ և այդ ժամանակ որևէ առարկություն չէր եղել: Օրակարգի նյութերի հետ կապված վերջինս նշեց, որ կարող են համարել նյութ չի ուղարկվել, և այս նիստին էլ կարող են առաջարկներ անել: Նախորդ նիստին ընթացակարգը բացատրվել է հետագա անելիքների հետ կապված և առարկություն չի եղել: Նա փաստեց, որ ցանկության դեպքում հարցը կարող է քվեարկության դրվել և որոշել՝ գիտխորհրդի նիստը օրինաչափ է, թե՞ ոչ: Ա. Ավետիսյանն ասաց, որ ինքը պարզապես իր մտահոգությունն է հայտնել:

Օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին.- «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների նախագիծը: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը առաջարկեց աշխատել հետևյալ ընթացակարգով. հրավիրել անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Արմեն Թադևոսյանին՝ հանձնաժողովի անունից խոսելու, ապա արդյունավետ աշխատանքի համար կետ-կետ քվեարկել, քանի որ կետերն իրարից անկախ են, բացի այդ կարող են անդամները առաջարկություններ հնչեցնել: Ա. Թադևոսյանը նշեց, որ փաստաթղթի կազմման համար հիմք են հանդիսացել ֆակուլտետներից ստացված առաջարկները, որոնք սինթեզվել են և արտացոլվել նախագծում: Եղել են նաև նախորդ գիտական խորհրդում ներկայացված աշխատանքային նախագծի վերաբերյալ արված առաջարկություններ, որոնցից մի քանիսը նույնպես արտացոլվել են վերջին նախագծում: Նրա փոխանցմամբ, առաջարկները եղել են աշխատանքային խմբի կողմից, որոնց մի մասն արտացոլված է նախագծում՝ հատուկ

առաջարկի կամ հատուկ կարծիքի կարգավիճակով: Առաջարկությունների առաջին կետով առաջարկվում է բուհի կառավարման խորհրդի թվաքանակը սահմանել կենտ թվով: Առաջարկն արել է աշխատանքային խմբի անդամ Վահե Հովհաննիսյանը: Պատճառաբանությունն այն է, որ կենտ թվով խորհրդի անդամների թիվ սահմանելը քվեարկության ժամանակ ձայների մեծամասնության տեսանկյունից ավելի հասկանելի և ընկալելի է: Առաջարկվել է խորհրդի ձևավորման նոր մոդել: Առաջարկվել է երկու արտաքին հրավիրյալ անդամներ ներգրավվել խորհրդի կազմում, որոնց մրցութային ընտրության կարգն ու պայմանները կսահմանվեն բուհի կանոնադրությամբ: Ա. Թադևոսյանի փոխանցմամբ, դրա նպատակն այն է, որ բուհի կառավարման խորհրդի աշխատանքներին ներգրավվեն մրցութային հիմունքներով այնպիսի հրավիրյալ անդամներ, որոնք այս կամ այն կերպ կարող են իրենց ներուժը՝ ֆինանսական թե մտավոր, ներդնել բուհի կառավարման գործընթացում: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանի փոխանցմամբ, օրենքի ներկայացված նախագծով որոշակի անհամապատասխանություն կար ՀՀ սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի հետ և դա վերաբերում է բուհական ինքնակառավարմանը: Խնդիր կա բալանսավորելու բուհի կառավարման խորհրդում պետության և բուհի մասնակցությունը: Նախնական տարբերակում կար 6-6 համադրություն: Ընդ որում, տեսականորեն կարող էր ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ որոշումները չընդունվեին, քանի որ խորհրդի անդամների քանակը գույզ էր: Հետևաբար եղավ առաջարկ, որ խորհրդի կազմը կենտ թվով սահմանվի, օրինակ՝ 13 հոգանոց խորհրդի կազմ: Նրա տեղեկացմամբ, այդ պարագայում էլ առաջ էր գալիս երկրորդ հարցը. կարող էր վեճ առաջանալ՝ ում տալ գերակայությունը՝ պետությանը, թե՞ բուհին. «Այդ իրավիճակից խուսափելու համար որոշում կայացվեց առաջարկ անել, որ երկու հրավիրյալ անդամներ լինեն, որոնք պատրաստ կլինեն ինչ-որ կերպ աջակցություն ցուցաբերել բուհին՝ ներդնելով գումար, մտավոր կարողություններ կամ հեղինակություն: Այս առումով կունենանք որոշումների կայացման համար կայուն կառուցակարգ և նաև որոշակի բալանսավորում՝ բուհի և պետության մասնակցության առումով»: Մարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանի կարծիքով, վիճակագրության համաձայն՝ միշտ չէ, որ բոլոր անդամները մասնակցում են քվեարկությանը. «Եթե ուզում եք 13, եկեք գրենք 13, բայց հիմնավորում չավելացնենք, թե այսպես լինի, որ երաշխավորվի: Ուզում եք՝ ոչ էլ գրենք, որ լինի կենտ թվով, ուղղակի առաջարկենք 13 անդամ: Բայց հաշվի առնենք, որ այս առաջարկն անում ենք այն գիտխորհրդում, որն ունի 88 անդամ, այսինքն՝ գույզ թվով: Բացի դրանից՝ մի քանի օր առաջ էլ, երբ մենք հաստատում էինք հանձնաժողովի կազմը, հաստատեցինք 4 հոգանոց հանձնաժողով, բայց հիմա ասում ենք կենտ թվով: Կարծում եմ՝ անհամապատասխանություն կա»: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանն առաջարկեց հիմնավորումը հանել և թողնել պարզապես 13 թիվը: **3.(Ե)** Միրզոյանը նշեց, որ առաջարկ էր ներկայացրել՝ ամրագրել 12-20 անդամ, որովհետև եթե նայում ենք, որ համալսարանի համար էլ պետք է 12 խորհրդի անդամ լինի, ինչ որ մեկ այլ բուհի համար էլ, արդարացված չէ»: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանի հավաստմամբ, բուհի մեծությունը պետք է չազդի դրա կառավարման կամ կառավարիչների քանակի վրա: Ի պատասխան **3.(Ե)** Միրզոյանի դիտարկմանն ու առաջարկին՝ Վ. Հովհաննիսյանը նշեց, որ պետք է տարբերակել երկու իրավիճակ՝ փաստացի և իրավական: Իրավական առումով կենտ թիվ է նախատեսվում, որը իրավաբանորեն երաշխավորում է որոշումների ընդունման համար մեծամասնության

հնարավորություն: Փաստական առումով, թե քանի հոգի կմասնակցեն նիստին, քանիսը չեն մասնակցի և ինչպես կքվեարկեն, արդեն երկրորդական հարց է: Ե. Միրզոյանի փոխանցմամբ, 7 անդամի կողմ քվեարկելը և՛ 12-ի, և՛ 13-ի դեպքում մեծամասնություն է: Երկու դեպքում էլ այն անհրաժեշտ է: Այսինքն՝ թվի կենտ կամ զույգ լինելը չի երաշխավորում: Վ. Հովհաննիսյանը պարզաբանեց, որ հնարավոր է այնպիսի իրավիճակ, որ լինի ձեռնպահ, դեմ, կողմ՝ նայած, թե ինչ որոշում է կայացվում: Որոշումներ կան, որոնք պետք է երկու երրորդով անցնեն: Այս պարագայում կենտը ամենաառաջամիտ կառուցակարգն է, խոսքը կենտի մասին է: Բացի դրանից՝ կենտը հնարավորություն է տալիս համալսարանի մասնակցության չափը ավելացնելու: Զույգի պարագայում այդ հնարավորությունը չի ապահովվում:

ՈՒՄ նախագահ Դավիթ Ափոյանը ուսանողների ներգրավվածության վերաբերյալ առաջարկեց կառավարման խորհրդում ուսանողների թիվը դարձնել 2 և այդ առաջարկը ներառել առաջարկությունների ընդհանուր փաթեթում: Ի պատասխան Վ. Հովհաննիսյանը նշեց, որ այդ հարցը քննարկվել է հանձնաժողովում և առաջարկվել է մինչև երկու ուսանող և մինչև երկու արտաքին անդամ: Տրամաբանությունը այն է, որ եթե սահմանում ենք չափանիշներ արտաքին անդամներ ներգրավվելու համար, կարող է ինչ-որ մեկը ցանկություն ունենա համալսարանին նվիրաբերել ինչ-որ չափի գումար: Հիմա կարող է մի հոգի այդպես գտնվել, երկուսը՝ չէ: Առաջարկ եղավ սահմանել մինչև երկու ուսանող, տվյալ պարագայում, եթե արտաքին անդամ, մենք, ըստ կանոնակարգի, կներգրավվեինք մեկ հոգի, ապա խորհրդի կազմում կլինեն երկու ուսանող և հակառակը: Բայց քանի որ նախապատվությունը տրվեց որոշակիությանը, առաջարկվեց արտաքին 2 անդամի մոդելը: Նրա հիմնավորմամբ՝ հիմքում զուտ տեսականորեն դրվել է ինչ-որ ձևով բուհի համար նյութական օգուտ բերելու հարցը: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ղեկան Մարատ Գրիգորյանն ասաց, որ թե հստակ նշվում է, թե ինչպես պետք է ձևավորվի այդ 13 անդամը: Լիազոր մարմնի կողմից անդամների ձևավորման հստակություն և որոշակիություն չկա: Վ. Հովհաննիսյանն ասաց, որ համալսարանի մասով հղում է կատարվել կանոնադրությանը, իսկ մյուս մասը համալսարանի իրավասությունից դուրս է: Առանձին կարող է լինել կանոնակարգ, օրենքին համապատասխան այլ փաստաթղթեր պետք ընդունվեն: Սա ընդամենը ամրագրում է սկզբունքները: Թե այդ սկզբունքներն ինչպես կյանքի կկոչվեն, ինչ կանոնակարգով, արդեն երկրորդ փուլի հարց է: Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Հայկ Մնացականյանը երկու դիտարկում ներկայացրեց. «3-րդ կետում նշված է՝ երկու արտաքին հրավիրյալ անդամներ, որից հետո գրված է մրցույթ: Այսինքն՝ հրավիրում ենք, թե՞ մրցույթ ենք անցկացնում: Կանչում ենք 10 հոգու, 8-ին հե՞տ ենք ուղարկում: Բացի դրանից՝ ինչո՞վ է պայմանավորված, որ ընտրության կարգը պետք է կանոնադրությամբ ամրագրվի: Միգուցե բուհի կողմից հաստատված ընտրության կարգով: Այսինքն՝ անպայման պե՞տք է կանոնադրության մեջ ամրագրել, թե՞ չէ»: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը պարզաբանեց, որ օրենքից հետո հաջորդ փաստաթուղթը կանոնադրությունն է և եթե կանոնադրությունը այն լիազորի կանոնակարգին, դա ուրիշ հարց է: Հ. Մնացականյանը նշեց նաև, որ գործարարը լայն հասկացություն է և բուհին ավելի օգտակար կլինի, եթե խոշոր բիզնեսի ներկայացուցիչ լինի: Վ. Հովհաննիսյանի կարծիքով, գործարարները, կրթության և գիտության ոլորտի ներկայացուցիչները պետք է օժտված լինեն մեկ կարևոր հատկանիշով՝ հեղինակությամբ, որը զուգորդվում է հանրային ճանաչմամբ: Հայ բանասիրության ֆակուլտետի

դեկան Արծրուն Ավագյանը հետաքրքրվեց, թե առաջարկությունների 1.3-րդ կետում նշվող հրավիրյալ անձանց ո՞վ է առաջադրում, ինչին ի պատասխան Վ. Հովհաննիսյանի պարզաբանեց, որ եթե բաց մրցույթ է, էլ առաջադրում չկա, ինքնաառաջադրում է և ընտրում է գիտխորհուրդը, ակադեմիական խորհուրդը: Ուսանող անդամ Նարեկ Մարգարյանի կարծիքով, կատարելություն. «Այդ արտաքին անդամները՝ 6 հոգին, որոնց նախարարությունն է մեզ տրամադրելու, նվիրաբերություն չեն տրամադրելու համալսարանին: Այսինքն՝ իրենք ուղղակի նախարարության ներկայացուցիչներ են ապահովելու համալսարանում, իսկ այս արտաքին անդամները, որոնց մենք մրցութային կարգով պետք է ընտրենք, որոշակի պարտավորվածություններ են ունենալու, որոնք ինչ-որ չափով կօգնեն համալսարանի գործունեությանը: Տարբերությունը սա է: Մեզ համար կարևոր է, որ համալսարանին ինչ-որ նվիրաբերվի, և համալսարանի գործունեությունը շահի, երկրորդական է, թե նվիրաբերողը ով կլինի: Դրա համար նախարարությունը ավելի մեծ ծավալներով կարող է այդ մրցույթն իրականացնի, և ավելի լավ, չակերտավոր ասած, նվիրաբերողներ բերի համալսարան»: Վ. Հովհաննիսյանը նկատեց, որ նվիրաբերումը միայն օրինակ է, խոսքը կարող է վերաբերել նաև հեղինակությանը, համալսարանի շահերին ծառայեցնելուն և այլն: Նվիրաբերումը չափանիշ չէ: Շեշտը պետք է դրվի քվոտայի վրա, ինչն արված է ներկայացված առաջարկով. համալսարանի քվոտան ավելացված է, ուղղակի ուսանողության հատվածը կայուն փոքրամասնություն է թողնված: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը հետաքրքրվեց և հարց ուղղեց, թե արդյո՞ք Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ օրենքի նախագծում առկա է հայեցակարգ, քանի որ Վ. Հովհաննիսյանը խոսեց հայեցակարգի մասին: Ի պատասխան՝ Վ. Հովհաննիսյանն ասաց, որ խոսքը հիմնավորումների մասին է:

Ս. Գրիգորյանը հետաքրքրվեց աշխատանքային խմբի անդամներից, թե օրենքում առաջարկություններ ներկայացնելու հարցը քննարկելիս, անհրաժեշտություն չէ՞ն տեսել քննարկել, թե որքան է արդյունավետ բուհերի խորհրդի ձևավորումը: Ինչքա՞ն է այն օգնել բուհերի վարկանիշը բարձրացնելու կամ լավ կառավարում իրականացնելու հարցում: Թե այն պարզապես ավելորդ օղակ է, որը բուհին ավելի շատ կաշկանդում է, քան օգնում: Ռեկտորի ժ/պ Գ.Գևորգյանը պատասխանեց, որ բուհերի հոգաբարձուների խորհուրդն, իր կարծիքով, արդյունավետ չի գործել, հիմա էլ արդյունավետ չի կարող գործել: Ինչքան թվաքանակը մեծ լինի, այնքան արդյունավետությունը փոքր կլինի: Նրա փոխանցմամբ՝ անընդհատ պայքար է, թե ով ինչքան է ներկայացված հոգաբարձուների խորհրդում. «Երբ ուսանողությունը ներկայացված է 25 տոկոս, այն պետք է հարցեր բարձրացնել ուսանողության մասին: Բայց հիմնական մոդելը դարձել է ինչպես ընտրել, ինչպես մասնակցել կառավարմանը, և եթե մենք գնում ենք հարց բարձրացնելու սկզբունքով, ապա մի հոգին էլ հերիք է: Եթե առաջնորդվում ենք այն սկզբունքով, որ այս կամ այն խումբը պետք է ունենա վճռական ազդեցություն կառավարման գործընթացում, այդ ժամանակ պայքար է գնում՝ ըստ տոկոսային ներկայացվածության: Երբ առաջին անգամ խորհուրդը ձևավորվում էր, 72 հոգի պարզապես հավաքվում էին այստեղ, և եթե հիմա մարդիկ կան, որ բողոքում են, որ խոսքը բոլորին չի հասնում, այն ժամանակ հենց այդ իրավիճակն էր: Այնպես չէր, որ բոլորը կարողանում էին արտահայտվել: Ինչքան Հոգաբարձուների խորհուրդը լինի փոքրաթիվ, այնքան կլինի ավելի արդյունավետ: Արդյունավետ չի եղել, որովհետև մեծաթիվ է»: Ս. Գրիգորյանի հարցին ի պատասխան Վ. Հովհաննիսյանը նշեց, որ, հարցին մոտեցել է զուտ

իրավական տեսանկյունից և արձանագրել այն, որ օրենքի նախագծի այն տարբերակը, որն ուղարկվել էր քննարկմանը, Սահմանադրությանը չէր համապատասխանում այն առումով, որ Հոգաբարձուների խորհրդի առաջարկվող ձևավորման կարգը, կազմը, ձևաչափը բուհական ինքնակառավարումը ապահովել չէր կարող: Դրա համար էլ թվաքանակը քննարկվել է ոչ թե զուտ քանակական առումով, այլ ընդամենը սահմանվել, որ լինի կենտ ու հոգուտ համալսարանի ներկայացվածության ու քվոտայի: Առաջարկության ամբողջ տրամաբանությունը դա է: Ռեկտորի Ժ/պ Գ.Գևորգյանն առաջարկեց քվեարկության դնել այդ կետը, բայց Գագիկ Ղազինյանը նշեց, որ սխալ ճանապարհ է ընտրված և պետք է որոշել՝ ներկայացված առաջարկությունների փաստաթուղթն ամբողջությամբ, անկախ բովանդակությունից, ընդունելի է, թե՞ ոչ: Նրա հավաստմամբ՝ ամբողջ խնդիրը հայեցակարգի և պատշաճ հիմնավորումների բացակայությունն է. «Բայց նախ մինչև առանձին կետեր քննարկելը՝ որոշենք, թե արդյոք այդ ամբողջ օրենքի վերաբերյալ մենք ընդունում ենք ընդամենը 5-6 կետանոց առաջարկություն: Ինչի՞ հիման վրա: Մեկը չի ասի՝ լավ, մի ամբողջ գիտական հանրույթ էք, դուք ինչ տեսաք, որ գրեցիք այդ առաջարկությունները, ինչ քննարկեցիք, ինչ հիմնավորումներ ունեք, ինչ հիմնավորման բացակայություն տեսաք, որ նման առաջարկություն էք անում, չի կարելի այդքան իջեցնել այս բուհի մակարդակը: Սա նույնիսկ իրեն հարգող անհատը չէր ներկայացնի, միգուցե Ֆեյսբուքի մեկնաբանություններում միայն գրեր իր անունից, բայց բուհի անունից ես ուղղակի կամաչեմ, եթե օրենքի վերաբերյալ այդ փաստաթուղթը ներկայացնենք, որովհետև դա որպես առաջարկություն չեմ ընդունում»: Ռեկտորի Ժ/պ Գ.Գևորգյանը պարզաբանեց, որ նախորդ խորհրդի նիստին բավական երկար քննարկել է նախագիծ, որը կոչվում էր «Կարծիք օրենքի վերաբերյալ», որը չընդունվեց: Եղավ առաջարկ՝ անել գիտխորհրդի նիստ, որպեսզի քննարկվեն կոնկրետ առաջարկություններ, դա հաստատվեց, կազմվեց աշխատանքային խումբ, որը ներկայացրել է նախագիծ, որը բաց է նոր առաջարկություններ անելու համար: Գ. Ղազինյանը նշեց, որ ուղղակի ցանկանում է խորհրդի կարծիքն իմանալ՝ համաձայն են, որ այս փաստաթուղթը նման տեսքով ներկայացվի որպես համալսարանի հավաքական տեսակետ: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանն ասաց, որ նիստի օրակարգը ձևավորվել է հանձնաժողովի ներկայացրած կարծիքը լսելու համար, բայց բաց է նաև օրակարգային այլ հարցեր ընդգրկելու համար, ուստի առաջարկեց լսել Ա. Թադևոսյանին, ապա քննարկման ժամանակ Գ. Ղազինյանի առաջարկած հարցն ընդգրկել օրակարգի մեջ և քննարկել: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը ասաց, որ նախորդ նիստին քննարկվել է այդ հարցը, և որոշվել, որ ընթացիկ նիստին ներկայացվում են առաջարկություններ՝ առաջարկելով առաջին կետը դնել քվեարկության: Գ. Ղազինյանն առաջարկություն հայտնեց առ այն, որ եթե կետերով քվեարկվի նախագիծը, որոշ մարդիկ կողմ կքվեարկեն, որոշ մարդիկ՝ դեմ և կստացվի, որ կետերն ընդունվեցին, իսկ փաստաթղթի մասին կարծիք չեղավ: Նա առաջարկեց նախ ելույթները լսել, ընդհանուր կարծիք արտահայտել: Ըստ նրա՝ հիմնական մտահոգությունն այն է, որ չի կարող գիտական խորհրդի անունից նման փաստաթուղթ ներկայացվել, չի կարելի առանց վերլուծելու օրենքի նախագիծն անել առաջարկություններ, չի կարող համալսարանի 80-հոգանոց խորհուրդն այդ ամբողջ օրենքի վերաբերյալ անել 5-6 առաջարկություն: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը նշեց, որ որոշակիորեն համաձայն է Գ. Ղազինյանի կարծիքի հետ՝

նշելով, որ դա չէ ճիշտ ճանապարհը: Ըստ նրա՝ կարևոր է Ա. Թադևոսյանի առաջարկներից հետո գիտխորհրդի անդամները կարծիքներ հայտնեն փաստաթղթի վերաբերյալ, ապա նոր անցնել ամբողջական փաստաթղթի քննարկմանը: Գ. Գևորգյանը նշեց, որ դեմ չէ նման քննարկմանը, այսինքն՝ ամբողջը կարդալ, նոր քննարկել. «Բայց ասում եմ այն, ինչ որոշվել էր նախորդ նիստի ժամանակ: Եթե հիմա դուք՝ խորհրդի անդամներդ, առաջարկում եք փոխել օրակարգը, դա կլինի նոր խորհուրդ, սակայն եթե այդպես եք ուզում, պարոն Թադևոսյանն ամբողջը կներկայացնի»:

Ա. Թադևոսյանը, ներկայացնելով առաջարկությունների դրույթները նշեց, որ առաջարկությունների երկրորդ կետով առաջարկվում է օրենքում սահմանել բուհերի կառավարման առանձնահատկությունները, սահմանել նաև այնպիսի իրավակարգավորումներ, որոնք հստակ կերաշխավորեն հավասար մրցակցային պայմաններ բոլորի համար. «Խոսքն այստեղ հանրային, մասնավոր, միջպետական պայմանագրերով ստեղծված բուհերի մասին է»:

Երրորդ կետով, նրա փոխանցմամբ, վեր են հանվում հայեցակարգային խնդիրները, որոնք այս կամ այն կերպ բացակայում են օրենքի նախագծից, չորրորդ կետով առաջարկվում է մեկաստիճան գիտական աստիճանաշնորհման համակարգի փոխարեն սահմանել երկաստիճան համակարգ, այսինքն՝ թեկնածուի գիտական աստիճանը հավասարեցնել PhD-ին, իսկ դոկտորի գիտական աստիճանը՝ հաբիլիտացված PhD-ին: «Աշխատանքային խմբով քննարկելու ժամանակ մի փոքր վերապահում ունեինք հանրային բուհ եզրույթի հետ կապված, և ուզում ենք առիթն օգտագործել ու հիշեցնել, որ ժամանակին մենք առաջարկն արել ենք, մասնավորապես՝ Իրավագիտության ֆակուլտետը, որ կամ կրթական հիմնադրամների մասին օրենք ընդունվի, կամ բուհ՝ որպես այդպիսին կազմակերպաիրավական ձև, այդպիսի կարգավիճակ տրվի ուսումնական հաստատություններին, այդ տրամաբանության մեջ առաջարկում ենք մեկ անգամ ևս քննարկել այդ հնարավորությունը», - նշեց Արմեն Թադևոսյանը: 6-րդ կետը, նրա տեղեկացմամբ, վերաբերում է «Ուսանողական խորհուրդներ» եզրույթին, որն օրենքում օգտագործվում է մի դեպքում եզակի թվով, մի դեպքում՝ հոգնակի, այդ առումով տարբերություն է առաջանում, թե Հոգաբարձուների խորհրդի անդամին ով պետք է ընտրի, ո՞ր Ուսանողական խորհուրդը. «Եթե դրանք մի քանիսն են, առաջարկում ենք եզրույթը դարձնել եզակի կամ մանրամասնել, թե խորհրդի անդամի առաջադրման իրավունքն ինչպես պետք է իրացվի, ՈԻԳԸ-ի վերաբերյալ իրավակարգավորումներն օրենքում բացակայում են, այդ պատճառով առաջարկում ենք անդրադառնալ նաև դրան, քանի որ շատ ենք կարևորում»:

«Առաջարկել ենք բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրումը թողնել պարտադիր, ինչպես նախատեսված էր, իսկ ծրագրայինը դարձնել կամավոր: Դրա հետ կապված բազմաթիվ մոտեցումներ կան՝ սկսած ֆինանսականից, որ նրանք մեծ ֆինանսական բեռ կդառնան բուհերի համար: Նախագծում մեզ հայտնի ռոտացիայի սկզբունքով ուսման վարձավճարների լրիվ փոխհատուցումը որպես կրթաթոշակ է ներկայացվում, բայց հիմնավորումներ չկան, այդ պատճառով առաջարկել ենք վերանայել այդ մոտեցումը և թողնել, որովհետև դա բավականին արդյունավետ կարող է լինել առաջադիմության խթանման տեսանկյունից», - թվարկեց Արմեն Թադևոսյանը: Նրա խոսքով, 10-րդ կետով առաջարկվել է «70 տարին» փոխարինել կենսաթոշակային տարիք բառերով. «Սա վերաբերում է այն դրույթին, որ գիտական ծրագրերում չընդգրկված անձանց 70 տարին լրանալուց հետո նրանք որոշակի պարգևավճար են ստանում: Հարց է առաջանում, եթե մարդը 63 տարեկանում չի աշխատում, այդ ծրագրերում ընդգրկված չէ,

կենսաթոշակային տարիքից պետք է սպասի մինչև 70 տարեկան, հետո ստանա, դրա համար առաջարկել ենք, որ երբ կենսաթոշակային տարիքը լրանա և այլևս ընդգրկված չի լինի նման ծրագրերում, այդ ժամանակ վճարվի»: «11-րդ առաջարկը, որը, ըստ էության, կրկնում է «Կրթության մասին» օրենքը, բայց քանի որ կարևորվել էր ֆակուլտետների առաջարկներում և գրադարանի կողմից էր հնչել, որ ԵՊՀ-ի մասին հատուկ կարգավիճակը այստեղ էլ հնչեցվի՝ մտածելով, որ երբ օրենքն ընդունվի, այն դրույթները, որոնք վերաբերում են բուհերին, դուրս են գալու, և առաջարկել, որ այդ առանձնահատկությունն կոչվածը, որը վաղուց օրենքում կա, կառավարությունը սահմանի», - առաջարկությունների փաթեթը ներկայացնելիս նշեց Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետը:

Գ. Ղազինյանը հետաքրքրվեց, թե ինչու առաջարկներում որևէ խոսք, բառ չկա գիտության մասին: Գ. Գևորգյանի դիտարկմանը, թե նախորդ անգամ նրա և պարոն Սադյանի կողմից եղավ առաջարկ դրան չանդրադառնալու, Գ. Ղազինյանը պատասխանեց, որ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Աշոտ Սադյանն է առաջարկել չանդրադառնալ: Բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանն անդրադարձավ օրենքի նախագծի հայեցակարգին՝ հետաքրքրվելով, թե արդյո՞ք այն պարտադրված է որևէ օրենքով, իրավական ակտերով հստակ որպես առանձին փաստաթուղթ հայեցակարգի պահանջ կա՞, թե՞ ոչ: Վ. Հովհաննիսյանը պատասխանեց, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 5-րդ հոդվածը խոսում է նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման մասին, այսինքն՝ եթե նորմատիվ իրավական ակտ է ընդունվում, նախագիծ է կազմվում, ապա հնարավոր ազդեցության գնահատում պետք է արվի: Գ. Ղազինյանը նշեց, որ մինչև նմանատիպ օրենքների նախագիծ պատրաստելը՝ ուղղակի գրված կամ չգրված օրենք է, որ պետք է հիմնավորվի, թե ինչու պետք է լինի կամ չլինի նման փաստաթուղթ, որի հիման վրա կարելի է համակարգային օրենք ունենալ:

Ռ. Մելքոնյանն առաջարկեց իր կարծիքն ասել, հետո նոր անցնել քննարկումներին: Նրա խոսքով, առաջարկությունների նախագծի մշակման հանձնաժողովը երկու օր բավականին կառուցողական մթնոլորտում աշխատել է, բայց երկու հարցի հետ կապված ինքը առաջարկ է ներկայացրել և երեք անդամներն էլ, ըստ էության, դեմ են քվեարկել: Նրա հնչեցրած առաջին առաջարկությունը վերաբերում էր դեկանի և ինստիտուտի տնօրենի ընտրությանը. «Գիտեք, որ կա նման կետ կամ առաջարկ՝ ձևավորվեն ինստիտուտներ, այսինքն՝ գիտակրթական որոշակի ստորաբաժանումներ համալսարանի մեջ, և դրանց ղեկավարները, ըստ էության, ունենալու են նույն գործառույթները կամ միգուցե և ավելի: Պարոն Գևորգյանը, օրինակ, առաջարկում էր՝ 19 ֆակուլտետի փոխարեն համալսարանն ունենա 7 ինստիտուտ: Օրենքում նշվում է, որ դեկանն ընտրվի է, իսկ ինստիտուտի տնօրենը՝ նշանակվի: Իմ առաջարկը հետևյալն է. քանի որ նախագծի 36-րդ հոդվածի 6-րդ մասում դեկանի և կառուցվածքային միավորի ղեկավարի պաշտոնները դիտարկվում են նույն հարթությունում, հետևաբար առաջարկվող նույն հոդվածի 10-րդ մասով ընտրվի պաշտոն սահմանել նաև գիտակրթական գործունեությամբ զբաղվող այլ կառուցվածքային միավորի՝ ինստիտուտի կամ դեպարտամենտի տնօրենի պաշտոնը, այլապես սա նույնպես հակասում է բուհական ինքնակառավարմանը: Եթե կառավարությունը ունի մեծամասնություն, ապա կարող է ընտրել ռեկտոր, իսկ ռեկտորն էլ կնշանակի դեկաններին և ինստիտուտի տնօրեններին, այսինքն՝ կդառնա ուղղահայաց կառավարում»: Ռ. Մելքոնյանի

երկրորդ առաջարկը վերաբերում էր ամենաքննարկվող հարցերից մեկին՝ հայոց լեզվի և հայոց պատմության դասավանդմանը. «Ես ավելի ընդհանրացնելու եմ կարծիքս այս հարցի վերաբերյալ: Ի դեպ, այսօր նաև Մայրենի լեզվի օրն է, խորհրդանշական է, որ Մայր բուհում այս հարցն է քննարկվում: Ուզում եմ՝ ամրագրենք, որ օրենքի նախագծի 4-րդ հոդվածում նշվում է, որ բարձրագույն կրթության և գիտության ոլորտում կա պետական քաղաքականություն:

Կառավարությունը սահմանում է, որ այս ոլորտի պետական քաղաքականության սկզբունքներից 6-րդը սահմանում է հայագիտական հետազոտությունների գերակայություն: Այսինքն՝ կառավարությունն օրենքի նախագծով առաջարկում է հայագիտական հետազոտություններին տալ գերակայություն: Ես, նույն տրամաբանությամբ շարունակելով, առաջարկում եմ օրենքի նախագծում ընդգրկել հետևյալ ձևակերպումը՝ հայագիտական առարկաների դասավանդմանը տալ գերակայություն: Իսկ մնացածը, օրինակ, այդ առարկաների դասավանդման մեթոդների նորացում, մոտեցումների թարմացում, ծրագրերի արդիականացում և այլն, կարծում եմ՝ տեխնիկական խնդիրներ են, որոնք կարելի է լուծել: Հայագիտական առարկաներ ասելով՝ նկատի ունեմ ոչ միայն հայոց լեզուն ու հայոց պատմությունը, այլև հայ գրականությունը, հայ եկեղեցու պատմությունը, մշակույթը և այլն: Մենք ամրագրում ենք, որ հայագիտական առարկաների դասավանդումն ունի համարժեք գերակայություն, իսկ մնացածը թողնում ենք բուհին, թող բուհն ինքը որոշի, թե ինչ դասավանդման ոճ է ընտրելու: Ես կարծում եմ, որ այս ամենը բուհական ինքնավարությանը չի խոչընդոտելու: Մենք պետք է փաստենք, որ հայագիտական առարկաները մեր նոր սերնդի ինքնությունը կերտող կարևոր, առանցքային հիմնասյուններից են: Ներկա իրավիճակում սա ամենակարևոր կետերից մեկն է, որը Մայր բուհը պետք է իրականացնի և առաջարկի»: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը ուշադրություն հրավիրեց Ռ. Մելքոնյանի կողմից արված առաջարկին՝ նշելով, որ եթե առաջարկն ընդունվի, ուրեմն բոլոր ֆակուլտետները պետք է անցնեն հայոց լեզու և հայոց պատմություն, հայ արվեստի պատմություն, հայ փիլիսոփայության մտքի պատմություն, հայ բնագիտության պատմություն, այսինքն՝ առաջարկվում է բոլոր հայագիտական առարկաների ներառում: Ի պատասխան Ռ. Մելքոնյանն ասաց, որ իր ասածները սխալ են մեկնաբանվում, խեղաթյուրվում: Գիտխորհրդի անդամներից հետաքրքրվեցին, թե գերակայություն ասելով՝ ի՞նչ նկատի ունի, ինչին ի պատասխան Ռ. Մելքոնյանը նշեց, որ գերակայություն ասելով՝ նկատի ունի այն, որ հայագիտական առարկաները պետք է ունենան գերակա կարգավիճակ, բայց պարտադիր չէ, որ դրանք ենթադրեն պարտադիր դասավանդում. ՀՀ-ում հայագիտական առարկաները պետք է ունենան առանձնահատուկ կարգավիճակ:

Կենսաբանության ֆակուլտետի դեկան Էմիլ Գևորգյանն ասաց, որ «գերակայություն» բառը հասկանալի է, բայց հետաքրքրվեց, թե ինչ իմաստ, ենթատեքստ ունի: Ի պատասխան՝ Ռ. Մելքոնյանն ասաց, որ իր խոսքը կառուցված էր կառավարության ներկայացրած օրենքի նախագծի տրամաբանությամբ. «Նախ երևի գերակայություն բառի վերաբերյալ, որ օրենքում տեղ է գտել, հասցեատերերից մեկը ձեր օրենքի նախագծի հեղինակներից մեկն է, նույն կերպ մենք կարող ենք հարցնել, թե որն է հայագիտական հետազոտությունների գերակայությունը: Ես կարող եմ իմ մեկնաբանությունն անել, եթե այն ձեզ կհետաքրքրի, ես իրավաբան չեմ, բայց իմ կարծիքով, հայագիտական առարկաների գերակայությունը նշանակում է, որ մեր կրթական ծրագրերում պետք է առաջնային լինի հայ քաղաքացու, հայկական ինքնությունը, հայկական

արժեհամակարգը կրող քաղաքացու կրթությունը Մայր բուհում և դրան միտված գործնական քայլերը: Թե դա կլինի «Հայոց պատմություն» առարկան 5 կիսամյակ անցնել, թե «Հայ մշակույթի պատմություն» առարկան մեկ կիսամյակ անցնել, դա արդեն բուհի ինքնավարության խնդիրն է, մեր լուծելու խնդիրն է: Ես այսպես եմ պատկերացնում»: Գ. Գևորգյանը հետաքրքրվեց, թե եթե դա բուհի որոշելիք հարցն է, ինչո՞ւ այն օրենքի մեջ մտցնել: Արևելագիտության ֆակուլտետի դեկանն ասաց, որ օրենքի տառին համապատասխան փորձում է առաջարկ անել: Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Յուրի Ավետիսյանը նույնպես այն կարծիքին էր, որ խորհրդով ընդհանուր կարծիք պիտի հայտնել նախագծի վերաբերյալ, հետո նոր քննարկել առանձին կետերը: Նա մտահոգություն հայտնեց հայագիտական առարկաների հարցի հետ կապված՝ առաջարկելով բուհերում հայոց լեզվի դասավանդման պարտադիր բաղադրիչը ավելացնել և ֆիքսել առաջարկությունների նախագծում: Ըստ նրա՝ հայոց լեզվի ուսուցումը, ըստ էության, գործիք է, միջոց է մասնագիտությունը սովորելու համար. «Եվ այդ գործիքը անընդհատ պետք է կատարելագործել և՛ դպրոցում, և՛ բուհում: Այն, որ ի վերջո, մենք չենք կրկնում դպրոցական ծրագիրը: Նրանք, ովքեր տեղյակ են, գիտեն, որ 4 տարի է՝ արդեն հենց ԵՊՀ-ում ուսուցանվում է «Խոսքի մշակույթ», «Խոսքային վարվեցողություն», «Ճարտասանական արվեստ», «Բանավեճի արվեստ», «Մասնագիտական լեզու» և այլն: Աշխատանքներ տարվում են: Թերություններ կան, իհարկե կան: Ես ինքս դասալսումներ եմ իրականացրել, և այնպես չէ, որ լավ տպավորություն ունեմ բնագիտական ֆակուլտետներում հայոց լեզվի դասավանդման մակարդակի վերաբերյալ: Մեզ ժամանակ է պետք: Մենք նոր ենք սկսել այս աշխատանքները: Ի վերջո, չեմ ուզում ասել այն, որ հայոց լեզուն բացարձակ արժեք է, այդ արժեքը պետք է գնահատվի, և մեր ինքնության կարևոր գործոններից մեկն է:

Վ. Հովհաննիսյանն առաջարկեց ամեն ինչ դիտարկել տրամաբանական շղթայի մեջ: Նա հորդորեց ուշադիր լինել և ֆիքսել, որ օրենքի նախագծում հայագիտական հետազոտությունների գերակայության մասին է նշվում, այլ ոչ թե կրթական ծրագրերի իրականացման ժամանակ առարկաների պարտադիրության. «Նախագծի հեղինակները որպես հիմնավորում ներկայացնում են հետևյալը. ասում են՝ մենք տալիս ենք ինքնավարություն, դուք ինքներդ որոշեք: Որոշեք, որ ձեր կրթական ծրագրերը լինեն մրցակցային: Մենք առաջարկում ենք՝ եկեք վերցնենք այդ ինքնավարությունը, որն իր մեջ ներառում է նաև ակադեմիական ազատությունը և մրցունակ կրթական ծրագրերով ադապտացնենք այդ ամեն ինչը»:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը նկատեց, որ առաջարկությունների ներկայացված փաթեթը կարող է դրվել քննարկման և ինչ-որ իմաստով իր նպաստը բերել ընդհանուր Ազգային ժողովի քննարկումներում օրենքի նախագծի վերաբերյալ: Նա նաև նշեց, որ հատերով չեն առաջարկությունները չափվում. «Ես կարծում եմ՝ այստեղ 8, 10, թե 11 առաջարկություններ են, դրանք վերաբերում են կոնկրետ խնդիրների: Մասնավորաբար, դա վերաբերում էր գիտական աստիճաններին, ինչը անցումային դրույթ էր ենթադրում, և հետագայում պետք է կարգավորվի: Այստեղ շատ կարևոր է, որ մեր առաջարկություններում, անդրադարձ կա, հանձնաժողովը այս իմաստով լավ գործ է արել, ինչպես նաև լավ գործ էր արել նախորդ հանձնաժողովը: Ինչո՞ւ մենք չընդունեցինք, որովհետև սա ընդունելով՝ մենք վերջ չենք տալիս, այսպես կոչված, հնարավոր փոփոխություններին»: Պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանի կարծիքով, բոլորին ակնհայտ է, թե ինչքան կարևոր են հայագիտական

առարկաները, հատկապես Հայոց պատմությունը. «Դա է փաստում կառավարության ղեկավարի՝ վերջերս Մյունխենում տեղի ունեցած հանդիպումը: Նաև հայեցակարգի, աշխարհայացքի ձևավորման տեսանկյունից են կարևոր, միաժամանակ դաստիարակության առումով, ազգային անվտանգության խնդիրներով և այլն: Այս առումով շնորհակալություն եմ հայտնում պարոն Մելքոնյանին և պարոն Ավետիսյանին՝ հարցը բարձրացնելու համար: Այս հարցը միայն համալսարանի խնդիրը չէ: Այն վերաբերում է ամբողջ հանրապետությունում առարկաների դասավանդմանը: Եթե հետազոտությունը գերակայություն է, ապա դրանից պետք է բխի նաև դասավանդումը: Այսինքն՝ դրանք պետք է սերտորեն կապված լինեն, և պարտադիր հանգամանքը շեշտված լինի: Միաժամանակ նշեմ, որ իմ կարծիքով, ուշացել ենք կարծիքներ, տեսակետներ հնչեցնելու տեսանկյունից: Ընդհանրապես կարծում եմ, որ համալսարանի միասնական կարծիքի առկայությունն անհրաժեշտ է»: Ինչ վերաբերում է հայեցակարգային խնդիրներին, Է. Մինասյանն ասաց, որ կրթության վերաբերյալ նախորդ օրենքներն ունեցել են հայեցակարգեր, սկզբունքներ, որոնց առկայությունը անհրաժեշտ է նաև այս օրենքում:

Գրադարանի տնօրեն Եզնիկ Միրզոյանը հիշեցրեց, որ օրենքում հայոց լեզուն նշվում է պարտադիր քննության առարկա բոլոր դիմորդների համար. «Այսինքն բուհ ընդունվողները պետք է պարտադիր հանձնեն հայոց լեզու. սա արդեն մեծ քայլ է: Ես նույնպես հանձնել եմ, չնայած որ ընդունվում էի բնագիտական մասնագիտությամբ ֆակուլտետ: Եթե խնդիր կա, ապա պետք է ընդունելության ժամանակ մտածել, թե ինչ թեստեր դնել, ինչպես անել, որ հետագայում ուսանողները հայոց լեզվի հետ կապված խնդիրներ չունենան»: Նա ցանկություն հայտնեց ավելացնելու այն կետը, որ բուհի կառավարման խորհրդի անդամը չի կարող լինել այն անձը, որը նաև այլ բուհերի խորհրդի կառավարման անդամ է. Նա ուշադրություն հրավիրեց օրենքի նախագծի հոդված 36-ի 14-րդ կետի վրա, ըստ որի՝ տարիքային կենսաթոշակի իրավունքը տվող տարիքը լրացած անձը բուհում ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակայման համար անցկացվող մրցույթի ընտրությանը չի կարող մասնակցել: Այդ անձի հետ բուհի ռեկտորը ամբիոնի առաջարկությամբ կարող է կնքել ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ պայմանագիր՝ 1 ուսումնական տարի սահմանով, տարեկան երկարաձգման իրավունքով: Կարծում եմ, որ այս տարբերակով 67 տարեկանից հետո մեր դասախոսներն էլ չեն կարող լինել դասախոս: Դրա համար ես առաջարկում եմ, որ բուհի ռեկտորը, ամբիոնի առաջարկությամբ, այդ անձի հետ կնքի առավելագույնը 0,75 դրույք ծանրաբեռնվածության աշխատանքային պայմանագիր՝ 1 ուսումնական տարի ժամկետով, որը չի բացառում, որ տվյալ դասախոսը հաջորդ տարի ևս կարող է կնքել պայմանագիր՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Այդ դեպքում ռեկտորը հնարավորություն կունենա տեսնելու՝ տվյալ դասախոսը պատրաստ է շարունակելու թե՞ ոչ, քանի որ լինում են դեպքեր, երբ դասախոսը ի վիճակի չի լինում մտնելու լսարան:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ղեկան Խաչատուր Ներկարարյանի կարծիքով, ընդհանուր հայեցակարգ չկա, բայց օրենքի նախագիծն այն տպավորությունն է թողնում, որ փորձ է կատարվում կրթական համակարգը առավելագույնս մոտեցնելու եվրոպական կրթական համակարգին՝ իհարկե, հաշվի չառնելով այն առանձնահատկությունները, որոնք առկա են մեր երկրում: Վերջինս հանդես եկավ որոշ առաջարկություններով: Առաջինը վերաբերում էր կրթության շարունակականության հարցին: Ըստ նրա՝ լավագույն ուսանողներին պետք է ինչ-որ կերպ հնարավորություն տրվի կրթությունը շարունակական դարձնել, և ցանկալի կլիներ՝ դա

օրենքում արձանագրվեր: Երկրորդը վերաբերում էր դասախոսների վերականգնողականության, գիտական մակարդակի բարձրացման խնդրին, նրանց պետք է տրվի որոշակի ժամանակով արձակուրդ՝ իրենց գիտական մակարդակը բարձրացնելու և կոչումներ ստանալու համար: Նախկինում դա եղել է, և եվրոպական կրթական համակարգում պահպանվում է, որ յուրաքանչյուր 5 տարին մեկ պրոֆեսորին հնարավորություն է տրվում 6 ամսով գործուղվելու ցանկացած համալսարան և այնտեղ բարձրացնելու գիտական մակարդակը: Խ. Ներկարարյանը նշեց, դա շատ կարևոր հարց է և պետք է ինչ-որ ճանապարհով միջոցներ հայթայթել, քանի որ 700 ժամ դասավանդող դասախոսը ոչ մի հնարավորություն չունի կատարելագործելու իր հմտությունները: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ վերջին դիտարկումը շատ կարևոր է, բայց այն պետք է լուծվի բուհական մակարդակում, քանի որ համալսարանն ունի ֆինանսական անկախություն, և խնդիրը վերաբերում է ֆինանսական հնարավորություններին, իսկ կրթության շարունակականության վերաբերյալ առաջարկը համարեց ընդունելի:

Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նկատեց, որ դահլիճում գիտխորհրդի ներկա անդամների թիվը պակասել է, և քննարկումները շարունակելու պարագայում հնարավոր է հասնել մի վիճակի, երբ գիտխորհուրդը իրավասու չլինի որևէ որոշում կայացնելու: Նա առաջարկեց ներկայացված առաջարկներն առանձին-առանձին քվեարկել, այնուհետև քվեարկել այն առաջարկները, որոնք հնչել են գիտխորհուրդի անդամների կողմից: Գիտխորհուրդի համաձայնությունից հետո ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը հնչեցրեց առաջարկները, սակայն առաջարկություն ներկայացնելու համար ձայն խնդրեց Ա. Ավետիսյանը: Վերջինս նշեց, որ համալսարանը, այնուամենայնիվ, կարծիք, դիրքորոշում պետք է հայտնեի օրենքի նախագծի վերաբերյալ, ունենար հստակ տեսակետ՝ ավելացնելով, որ ներկայացված առաջարկությունները չընդունվելու դեպքում, սակայն, կստացվի, որ ԵՊՀ-ն կհայտնվի խաղից դուրս վիճակում: Ա. Ավետիսյանը ներկայացրեց առաջարկություններ, որոնցից առաջինը վերաբերում էր խորհրդի անդամների թվին՝ նշելով, որ անընդունելի է ԵՊՀ-ի և այլ փոքր բուհի կառավարման խորհուրդների անդամների թվաքանակները հավասարեցվեն, քանի որ համալսարանի դերակատարությունը, ինչ-որ տեղ նաև կարևորությունը երևում է հոգաբարձուների խորհրդի անդամների թվից: Նա առաջարկեց հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը սահմանել 13-ից 21 կամ 7-13: Հաջորդ առաջարկությունն առնչվում էր օրենքի Նախագծի 34-րդ հոդվածին, որը վերաբերում է աշխատողների տարիքի սահմանափակումներին: Ըստ նրա՝ եթե հայոց լեզվի և հայ ժողովրդի պատմության դեպքում ասում են, որ բուհին տալիս են լայն ինքնավարություն, ապա ինչո՞ւ են մտնում գործատու-աշխատող իրավահարաբերությունների մեջ: Դրա համար գոյություն ունի Աշխատանքային օրենսգիրք և պետք է դա կարգավորվի այդ օրենսդրության շրջանակում: Տարիքային շեմի հետ կապված վերջինս նշեց, որ կան 70-ն անց դասախոսներ, որոնք մտնում են լսարան շատ առույգ, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին համապատասխան լսարանում դասախոսություն են կարդում, բայց կան նաև 40 կամ 50 տարեկան դասախոսներ, ովքեր թերթը ձեռքին ամբիոնի մոտ հազիվ են կարդում դասախոսությունը: Ա. Ավետիսյանի կարծիքով՝ տարիքային սահմանափակում դնելը ոչ միայն Սահմանադրության խախտում է, այլև՝ էջիզմ է և առաջարկեց հանել այդ սահմանափակումը կամ գոնե այդ հոդվածի «կենսաթոշակային տարիք» բառերը փոխարինել 70 տարեկանով: Վերջինս գոհունակություն հայտնեց, որ ներկայացված առաջարկների նախագծում անդրադարձ

կա ԵՊՀ-ի հատուկ կարգավիճակի օրենսդրական ամրագրմանը: Ա. Ավետիսյանը նշեց, որ գիտակրթական գործունեությամբ զբաղվող ֆակուլտետների, ինստիտուտների և կենտրոնների ղեկավարները պետք է լինեն ընտրովի, այլ ոչ նշանակովի: Օրենքի ընդունումից հետո ԵՊՀ բոլոր ֆակուլտետները կմիավորեն, կստեղծեն ինստիտուտներ, դրանց ղեկավարներին էլ կնշանակեն: Այդ դեպքում ոչ միայն համալսարանի, այլև ֆակուլտետների ինքնակառավարումը կոտնահարվի: Ուստի, առաջարկեց օրենքի նախագծի մեջ «ֆակուլտետի ղեկան» բառակապակցությունը փոխարինել «գիտակրթական գործունեություն ծավալող ստորաբաժանումների ղեկավարներ» բառերով և դա ներկայացնել որպես առաջարկություն:

Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը առանձին-առանձին կետերով քվեարկության ներկայացրեց հանձնաժողովի առաջարկությունները, ինչպես նաև՝ գիտական խորհրդի անդամների կողմից հնչեցված առաջարկությունները: Քվեարկության արդյունքում ընդունվեց 14 կետից կազմված առաջարկությունների փաթեթ, որը ներառում էր նաև գիտական խորհրդի անդամների կողմից հնչեցված որոշ առաջարկություններ:

Որոշվեց հաստատված առաջարկությունները ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ-ին:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Բուհի կառավարման խորհրդի կազմը սահմանել կենտ թվով: Միաժամանակ բուհական ինքնակառավարման (ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մաս) սկզբունքին առավելագույնս համապատասխանեցնելու նպատակով առաջարկվում է ներդնել կառավարման խորհրդի ձևավորման նոր ձևաչափ և, ըստ այդմ, նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանել հետևյալ խմբագրությամբ.

2. Կառավարման խորհուրդը բաղկացած է 13 անդամից:

3. Բուհի կառավարման խորհուրդը ձևավորվում է հետևյալ համամասնությամբ՝

1) 1-ը՝ ուսանողության ներկայացուցիչներից, որին առաջադրում է բուհի ուսանողական խորհուրդը,

2) 4-ը՝ բուհի հիմնական ակադեմիական կազմից, որոնց առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը,

3) 2-ը՝ արտաքին անդամներից, որոնց մրցութային ընտրության կարգն ու պայմանները սահմանվում են բուհի կանոնադրությամբ,

4) 6-ին՝ համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը՝ գործարարներից, կրթության, գիտության, մշակույթի կամ տնտեսության այլ ոլորտների ներկայացուցիչներից:

2. Հստակեցնել բուհերի կառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև սահմանել իրավակարգավորումներ, որոնք հստակ կերաշխավորեն հավասար մրցակցային պայմաններ բոլոր բուհերի համար (անկախ սեփականության կամ կազմակերպաիրավական ձևից):

3. Ելնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ նորմատիվ իրավական ակտի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման պահանջների պահպանման անհրաժեշտությունից՝ ներկայացնել, իսկ առանձին

դեպքերում հստակեցնել նախագծի մշակման հիմքում ընկած հաշվարկները, նախագծով սահմանված նպատակներն ու խնդիրները, ձևակերպել բուհական համակարգի վերջնական խնդիրներն ու տեսլականը, ինչը հնարավորություն կընձեռի հստակ գնահատել նախագծով ներկայացված իրավակարգավորումներն ու կառուցակարգերը: Նախագծից պետք է ակնհայտորեն բխի, թե պետությունն ինչպիսի բուհ և բուհական համակարգ է ներդնում, բարձրագույն ուսումնական և մասնագիտական ինչ որակներ է սահմանում քաղաքացիների համար, բուհերի գործունեության համար ինչպիսի մրցակցային պայմաններ է ապահովում:

4. Նախագծով հավասարեցվում են գիտությունների թեկնածուի և դոկտորի գիտական աստիճանները: Սահմանել երկաստիճան համակարգ՝ PhD և հաբիլիտացված PhD, և ըստ այդմ՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հավասարեցնել PhD-ին, իսկ դոկտորի գիտական աստիճանը՝ հաբիլիտացված PhD-ին: Նման աստիճանաշնորհումը հասկանալի կլինի եվրոպական ու նախկին խորհրդային երկրների համար և կապահովի արդյունավետ կապ գիտական աստիճանների ու կոչումների համակարգերի միջև:

5. Հաշվի առնելով այն, որ որոշակի վերապահում ունենք օրենքով սահմանված «հանրային բուհ» եզրույթի վերաբերյալ, քննարկել բուհերի համար առանձին կազմակերպարավական ձև սահմանելու հնարավորությունը:

6. Նախագծում օգտագործվում է «ուսանողական խորհուրդներ» եզրույթը, որից բխում է, որ բուհում կարող են գործել մի քանի ուսանողական խորհուրդներ: Մինչդեռ Նախագծի 26-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում սահմանված է, որ հոգաբարձուների խորհրդի ուսանող ներկայացուցչին առաջադրում է ուսանողական խորհուրդը: Տարընթերցումից խուսափելու նպատակով Նախագծում «ուսանողական խորհուրդներ» եզրույթը բոլոր տեղերում սահմանել եզակի թվով, հակառակ դեպքում մանրամասնել մի քանի ուսանողական խորհուրդների դեպքում Նախագծի 26-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով սահմանված իրավունքի իրացման կարգն ու պայմանները:

7. Նախագծում բացակայում է ուսանողական գիտական ընկերության վերաբերյալ իրավակարգավորումը: Առաջարկվում է Նախագծի 35-րդ հոդվածում սահմանել, որ բուհում գործում է ուսանողական գիտական ընկերություն, որի ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է բուհի կանոնադրությամբ:

8. Սահմանել, որ բուհերի ինստիտուցիոնալ հավաստարմագրումը պարտադիր է, իսկ ծրագրային հավատարմագրումը՝ կամավոր:

9. Պահպանել ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին մրցութային հիմունքներով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում (կրթաթոշակ) տրամադրելու հնարավորությունը:

10. Նախագծի 37-րդ հոդվածի 1-ին կետում «70 տարին» բառերը փոխարինել «կենսաթոշակային տարիքը» բառերով:

11. Օրենքով սահմանել, որ Երևանի պետական համալսարանը կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի կարգավիճակի առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

12. Քանի որ Նախագծի 36-րդ հոդվածի 6-րդ մասում ֆակուլտետի ղեկանի և կառուցվածքային միավորի ղեկավարի պաշտոնները դիտարկվում են նույն հարթությունում,

հետևաբար նույն հոդվածի 10-րդ մասում ընտրովի պաշտոնների ցանկում ավելացնել նաև գիտակրթական գործունեություն իրականացնող այլ կառուցվածքային միավորի (ինստիտուտի, կենտրոնի) ղեկավարի պաշտոնը:

13. Նախագծի 36-րդ հոդվածի 14-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «70 տարին լրացած անձը բուհում ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար անցկացվող մրցութային ընտրությանը չի մասնակցում: Այդ անձի հետ բուհի ռեկտորը ամբիոնի առաջարկությամբ կարող է կնքել ոչ լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանքային պայմանագիր 1 ուսումնական տարի ժամկետով՝ տարեկան երկարաձգման իրավունքով»:

14. Բարձրագույն կրթության շարունակականության սկզբունքն ապահովելու նպատակով յուրաքանչյուր կրթական մակարդակում սահմանել պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով տեղերի քվոտա:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ.Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

03.03.2020թ.